

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ
ԱԶԱԿՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դ. Գ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Մարդկային հասարակության զարգացման ժամանակակից փուլում դու-
րի քչերը առարկեն այն փաստին, որ այսուհետև տնտեսական դործընթացնե-
րի զարգացման հիմքում դերազանցապես ընկած պետք է լինեն տնտեսավար-
ման շուկայական սկզբունքները: Սակայն էկոնոմիկայի կառավարման վար-
չահրամայական համակարգի բոլոր տարրերի հապճեպ քայքայման ներկա
պայմաններում շուկայի ֆետիշացումը մեզանից շատերին գցել է մոլորու-
թյան մեջ ւշանրապետության տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում ա-
ղատ շուկայական հարաբերությունների փոխարեն բախվել ենք հասարակա-
կան հսկողությանը չենթարկվող, այսպես ասած «բազարային» (քառասային) հա-
րաբերություններին, ուստի պետք է ավելի լրջորեն գիտակցենք տնտեսական
ժամանակակից գործընթացների վրա պետության ակտիվ միջամտության ան-
հրաժեշտությունը: Ի դեպ, ներկայումս համաշխարհային տնտեսության զար-
գացման կարևորագույն միտումներից մեկն էլ հենց «...աստիճանաբար ան-
ցումն է միջին վիճակին՝ աղատ, հավասարակշռված և չափավոր կերպով պե-
տականորեն կարգավորվող շուկային»¹:

Ժամանակակից պայմաններում մեր ազգային էկոնոմիկայի մակրոտըն-
տեսական կարգավորման կարևորագույն առանձնահատկություններից պետք է
նշել ամենից առաջ այն, որ բանկային վարկի ընդլայնումը չի ուղեկցվում ռդ-
բաղվածության և աղղային արդյունքի աճով, քանի որ վարկային ռեսուրսները
գրեթե չեն ուղղվում կապիտալ ներդրումներին. Այսպես՝ բանկերի վարկային
ներդրումները 1994—1996 թթ. ավելացել են շուրջ 120 անգամ, իսկ համա-
խառն ներքին արդյունքը (ՀՆԱ) և արդյունաբերական արտադրանքը՝ հա-
մապատասխանաբար 20 և 11 %-ով: Այնուհետև, ինչպես հայտնի է, ազատ
շուկայական հարաբերությունների տիրապետության պայմաններում տնտե-
սության տարբեր ճյուղերի միջև դրամական միջոցների (կապիտալի) բաշխ-
ման կարևորագույն կարգավորիչ է ծառայում շահույթի նորման: Ահա թե ին-
չու ՀՀ-ում կապիտալի նշանակալի մասը ներդրվում է հենց առևտրի ոլոր-
տում, որն ասպնդվում է համեմատաբար բարձր շահույթ: Միևնույն ժամա-
նակ, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, առավել շահութաբեր
ճյուղերում գոյություն ունի ապրանքների և ծառայությունների գերարտա-
դրություն, իսկ ցածր շահութաբերություն ունեցողներին բնորոշ է խոռնիկա-
կան թերարտադրությունը: Այդ պատճառով էլ, չնայած շահույթի նորման շատ
կարևոր դեր է խաղում հասարակության մասշտաբով կապիտալի բաշխման
դործում (ըստ ճյուղերի), այնուամենայնիվ, այն չպետք է ծառայի որպես ներ-

¹ Деловая Армения, 1995, №4—6, с. 9.

ղրումների ուղղությունը որոշող միակ չափանիշ: Պետք է նշել նաև, որ արդեն հասունացել է ազգային էկոնոմիկայի հիմնական առանցքը կազմող արդյունաբերական ձեռնարկություններում մասշտաբային կապիտալ ներդրումների անհապաղ իրականացումը, քանի որ դրանցում հիմնական ֆոնդերը բավական «ծերացել» են: Մասնագետների գնահատմամբ հանրապետության միայն 20 խոշորագույն ձեռնարկություններում նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման համար պահանջվում է 2 մլրդ ԱՄՆ դոլար²:

Վերջապես, ազգային մրցունակ արտադրության զարգացման հարցերը միշտ էլ պետք է գտնվեն պետության ուշադրության կենտրոնում: Աշխարհում ոչ մի երկիր, լինելով ինչ-որ ապրանքի խոշոր արտադրող, չի ցանկանա օգնել հարևանին՝ տվյալ արտադրանքի արտադրության մեջ: Ընդհակառակը, ուրիշ երկրներին նա կտրամադրի դրամական և ապրանքային վարկեր՝ սեփական արտադրանքն իրացնելու նպատակով:

Այսպիսով, գիտակցելով մեր էկոնոմիկայի ներկա վիճակին բնորոշ վերոհիշյալ առանձնահատկությունները, մեր պետությունը պետք է այսուհետև վարկավորման գործընթացների վրա այնպիսի անմիջական ազդեցություն ունենա, որպեսզի ապահովվի վարկերի ընդլայնման գերազանցապես ներդրումային բնույթը, որը հնարավորություն կտա խթանելու ապրանքների և ծառայությունների արտադրությունը և հնարավորին չափ սովելի կարճ ժամկետում դուրս գալու տնտեսական ճգնաժամից: Ընդ որում, կարևոր է ներդրումների գործընթացին ազդել ինչպես անմիջականորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ ներդրումների պահանջներից բխող և էկոնոմիկայի սուբյեկտների դրամական միջոցների երկարատև ներդրման մոտիվացիայի բարձրացմանը նպաստող պայմանների ստեղծման միջոցով:

Բանկային վարկի ազգային արտադրության մեջ ընդգրկելու նպատակով անհրաժեշտ է մի կողմից իջեցնել տրվող վարկերի տոկոսադրույքը, մյուս կողմից, խթանել առևտրային բանկերին՝ ընդլայնելու երկարատև վարկավորման գործընթացները: Դրա համար պետությունը պետք է իրականացնի հետևյալ միջոցառումները.

ա) բանկերին տալ հարկային էական արտոնություններ՝ երկարատև վարկերից ստացած եկամուտների համար,

բ) պետականորեն ապահովագրել առևտրային բանկերում սպաժող տնտեսավարող սուբյեկտների երկարատև դեպոզիտները,

գ) արագացնել հայրենական բանկերի տնտեսական ինտեգրացման գործընթացներն արտասահմանյան ֆինանսական կապիտալների շուկաների հետ,

դ) ծածկել տոկոսների մի մասը (այն տոկոսների, որոնք հաշվարկվում են առևտրային բանկերի կողմից տնտեսավարող սուբյեկտներին երկարատև կապիտալ ներդրումների համար տրված վարկերի դիմաց),

ե) նպաստել, որ առ' իրային բանկերը ձեռք բերեն ռեֆորմներ՝ ոլետական ներդրումային բազաբաղադրության շրջանակներում:

Ինչպես հայտնի է, հարկերը ոչ միայն ապահովում են պետական բյուջեի եկամուտները, այլև այս կամ այն չափով խթանում կամ սահմանափակում են տնտեսավարող սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեությունը: Դր-

բաժնի հարկերն անմիջականորեն մասնակցում են դրամական միջոցների օգտագործման ուղղությամբ որոշումներ ձեռնարկելու, Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերի եկամուտների նշանակալի մասը ձեռք է բերվում նրանց վարկային գործունեության հաշվին, դժվար է նկատել, որ վարկային տոկոսի կազմավորման սյուրեքների վրա բացասական ազդեցություն են ունենում բարձր դրույթներով դործող հարկերը: Մինչդեռ հարկային արտոնությունների միջոցով վարկային տոկոսների նշանակալի իջեցումը վճարող նշանակություն կունենա ներդրումային նախագծերի իրականացման ժամանակ: Իհարկե, հարկերի իջեցումը կկրճատի պետական բյուջեի եկամուտները, սակայն այն միաժամանակ կխթանի ազգային արտադրության ընդլայնումը և հեռանկարում պետության եկամուտների մեծացումը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հենց երկարատև դեպոզիտներն են, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, կոշտ դառնալու տնտեսավարող սուբյեկտների ժամանակավորապես ազատ դրամական միջոցների ներգրավվածն ե դրանք երկարատև կապիտալ ներդրումների համար օգտալուծելու աղբյուր: Սկզբնականում է թույլատրվում այդ դեպոզիտների մասշտաբային հոսքն արտասահման, այլ պետք է բազմակողմանիորեն խթանենք դրանց ներգրավումն իրական արտադրության մեջ: Քանի որ բանկերի վարկային ներուժի գերակշռող մասը կազմավորվում է ներգրավված միջոցների հաշվին, ապա նման քաղաքականության կիրառումը կխթանի տնտեսավարող սուբյեկտների ազատ միջոցների հոսքի աճը երկարատև դեպոզիտների մեջ, և դրանով բանկերում կկենտրոնացվեն երկարատև բնույթի հսկայական դրամական ռեսուրսներ:

Զուգապես է նաև մոռանալ, որ ներկա պայմաններում տնտեսավարող սուբյեկտների մոտ դեռևս պահպանվում է բանկային հատվածի նկատմամբ խիստ անվստահության մթնոլորտը՝ հատկապես կապված 1994—1995 թթ. հանրառեպության տասնյակ բանկերի սնանկացման հետ: Ահա թե ինչու հարկային արտոնությունների հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև պետական մակարդակով կազմակերպել երկարատև դեպոզիտների ապահովագրման գործը, որը անտեսական սուբյեկտների և բնակչության համար էականորեն կիջեցնի բանկերում դրամական միջոցների ավանդադրման ռիսկը: Այդ միջոցառումը նաև իրական պայմաններ կստեղծի արտասահմանյան մասնավոր ներդրողների շարժուն դրամական միջոցները ներգրավելու երկարատև ավանդների ձևով և դրանք օգտագործելու երկարաժամկետ վարկավորման նպատակով:

Հայաստանի Հանրապետությունում աստիճանական անցումը շուկայական էկոնոմիկային հանգեցնում է համաշխարհային էկոնոմիկայի հետ ազգային անահաության ինտեգրացման անընդմեջ գործընթացին: Ինտեգրացման գործընթացները ենթադրում են ազգային էկոնոմիկան երկարատև ժամանակաշրջանում հարմարեցնել միջազգային չափանիշներին և մեր հանրապետությունը փուլ առ փուլ ընդգրկել աշխատանքի միջազգային բաժանման մեջ՝ սեփական առավելությունների օգտագործման համապարհով: Այդ պայմաններում անխուսափելի է դառնում հայրենական բանկերի ակտիվ և սերտ համագործակցությունը արտասահմանյան բանկային խմբերի հետ՝ մեր բանկերի համար վարկային գծերի բացման նպատակով:

Նման համագործակցության շրջանակներում արտասահմանյան տարբեր կազմակերպություններ («UMCOR», «World Wision», «Եվրասիա» և այլն)

մեր հանրապետության տարբեր մարզերում ուղղակի կամ հայրենական միջնորդ բանկերի միջոցով իրականացնում են բազմատեսակ վարկային ծրագրեր: Սակայն նրանց վարկերը հիմնականում կրում են կարճաժամկետ բրնույթ և առավելապես օգտագործվում են շրջանառության փոխհատուցվող մանր արտադրությունների ոլորտներում: Բացի այդ, մինչև վարկի մարման ժամկետը հասնելը վարկային պարտքի փուլ առ փուլ վճարումն ըստ էության կրճատում է տնտեսավարող սուբյեկտների շրջանառու միջոցները և, վերջին հաշվով, բարձրացնում վարկի օգտագործման գինը: Այդ պատճառով էլ պետությունը պետք է բազմակողմանիորեն խթանի կապիտալի համաշխարհային շուկաների փոխառու միջոցների մի մասը հայրենական բանկերում ուղղակի ներգրավելու գործը: Այդ ուղղությամբ ակտիվ քայլեր է ձեռնարկել ՀՀ կենտրոնական բանկը: Վերջինիս երաշխիքներով 1996—1997 թթ. հանրապետության որոշ առևտրային բանկեր արտասահմանյան բանկերից ստացել են 27 մլն ԱՄՆ դոլարի միջին ժամկետային վարկեր: Արտասահմանյան բանկերում կուտակված են երկարաժամկետ բնույթի նշանակալի դրամական միջոցներ և մեր հանրապետությունում իրավական բավարար երաշխավորվածության, քաղաքական կայունության և պետական համապատասխան աջակցության առկայության պայմաններում, դրանց մի մասը կարող է ներգրավվել մեր բանկերում և օգտագործվել որպես երկարաժամկետ ռեսուրսներ:

Երկարաժամկետ վարկավորման պետական անմիջական աջակցությունը նաև պետք է դրսևորվի տնտեսավարող սուբյեկտներին առևտրային բանկերի կողմից տրված ևրկարատև վարկերի տոկոսների մի մասը պետության հաշվին ծածկելու մեջ: Այդ միջոցառումը հնարավորություն կտա թուլացնել տոկոսային «հաշվիչի» ազդեցությունը և խթանել ներգրավված միջոցները օգտագործելու տնտեսավարող սուբյեկտների հիմնական միջոցների նորացման և ընդլայնման նպատակների համար: Պետության կողմից նման աջակցությունը, ինչպես ցույց է տալիս միջազգային հարուստ փորձը, հատկապես արդյունավետ նշանակություն է ունենում տնտեսության այնպիսի կապիտալատար և դանդաղ փոխհատուցվող ճյուղերի համար, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքները, տրանսպորտը, կապը և այլն:

Անհրաժեշտ է այսուհետև ուշադրությունը բեռնել հատկապես պետական ներդրումային վարկերի վրա: Այդ վարկերը պետք է տրվեն կառավարության կողմից մշակված, կենտրոնական բանկի հետ համաձայնեցված և Ազգային ժողովի կողմից հաստատված հեռանկարային ճյուղերի և ռեգիոնների զարգացման ծրագրերին համապատասխան, նման ծրագրերի մշակման անհրաժեշտությունը սլայմանավորված է ներդրումային ոլորտների նկատմամբ առայժմ անտարբեր վերաբերմունքով և ներդրումային գործընթացների մեջ պետական միջամտության կարգավորման ապահովման խնդիրներով: Դա, վերջին հաշվով, ուղղված կլինի հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական կողմնորոշիչ հետ ազգային էկոնոմիկայում մակրոտնտեսական համաձայնեցված կառուցվածքային փոփոխություններ մտցնելու և ռալ ներդրումների ինտենսիվ աճ ապահովելու նպատակների իրականացմանը:

Պետական վարկի տեղաբաշխումը առավելապես պետք է կատարվի հանրապետության բանկային համակարգի միջոցով: Ընդ որում, բանկերը, որոնք հանգև են դալիս որպես շուկայի առավել բազմակողմանի վերլուծողներ, ընդունակ են օպերատիվ բացահայտելու և գնահատելու վարկային միջոցների ներդրման հեռանկարային հնարավորությունները: Այդ իսկ պատճառով ներկա պայմաններում բանկերը կոչված են հանգես գալու իբրև կարևորագույն միջնորդներ՝ պետական ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացներում: Ներդրումային վարկերը կարող են տրվել ինչպես պետության կողմից վերահսկվող, այնպես էլ մնացած առևտրային բանկերի միջոցով՝ այդ վարկերի ստացման համար մրցույթ անցկացնելու ճանապարհով: Նման վարկերի տրամադրման համար հիմնական աղբյուրներ պետք է ծառայեն պետական սեփականության մասնավորեցումից ստացված միջոցները և միջազգային վարկերը:

Պետական սեփականության մասնավորեցման հաշվին գոյացած դրամական միջոցները պետք է ամենից առաջ ուղղվեն ազգային էկոնոմիկայում լայնամասշտաբ կառուցվածքային բարեփոխումներին, որոնք պահանջում են հրակայական կապիտալ ներդրումներ՝ մասնավորեցված ձեռնարկություններին երկարաժամկետ վարկեր տրամադրելու միջոցով: Բանն այն է, որ մեր հանրապետության ձեռնարկությունների հիմնական ֆոնդերն այնպես են մաշվել (և՛ ֆիզիկական, և՛ բարոյական), որ գործող տեխնիկայի և տեխնոլոգիայի մեծ մասը պիտանի չէ մրցունակ արտադրանքի արտադրության կազմակերպման համար: Ահա թե ինչու առանց երկաթուղի վարկերի ձևով պետական ֆինանսական լուրջ աջակցության հնարավոր չի լինի ազգային էկոնոմիկայի ճյուղերում իրականացնելու ռազմավարական բնույթի կառուցվածքային բարեփոխումներ և դրանք համապատասխանեցնելու միջազգային ստանդարտներին մակարդակին:

Ներկա պայմաններում մեր հանրապետության համար նշանակալի դեր ունեն զարգացած երկրներից և միջազգային ֆինանսավարկային կազմակերպություններից ստացված միջազգային վարկերը: Հենց նման վարկերը (որոնց բնորոշ է ցածր տոկոսագրությունը և երկար ժամկետով տրամադրումը), ինչպես ցույց է տվել միջազգային կուտակված փորձը, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական երկրներին և Ճապոնիային օգնեցին բավական կարճ ժամկետում վերականգնելու իրենց քայքայված տնտեսությունները: Միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, Միջազգային արժույթային հիմնադրամ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ և այլն) շարժուն վարկային ռեսուրսները, որոնք տրվում են կոնկրետ նպատակային ծրագրերի համար, հնարավորություն կտան խոշոր ներդրումներ իրականացնել ազգային արտադրության մեջ և աստիճանական տնտեսական աճ ապահովել մակրոտնտեսական մասշտաբով: Անհրաժեշտ է մեկ անգամ ևս ընդգծել, որ տրված վարկային ռեսուրսների օգտագործման միայն ներդրումային բնույթը հնարավորություն կտա հետագայում վերադարձնելու ստացված միջազգային վարկերը և մեր հանրապետության համար ապահովելու իրական տնտեսական օգուտ: Այսպես, 1997 թ. վերջին ՀՀ արտաքին պարտքը հասել է 679,48 մլն ԱՄՆ դոլարի, որի սպասարկման գումարը՝ 32,82 մլն դոլար է: Նման պայմաններում միջազգային վարկերի անարդյու-

նապես օգտագործումը խիստ պարտքային ծանրաբեռնվածություն է ստեղծում ապագա սերունդների համար:

Պետական երկարատև վարկերի կարևոր աղբյուր կարող են դառնալ նաև պետական բյուջետային քաղաքականության կատարելագործումից տնտեսվող միջոցները: Էկոնոմիկայի այժմյան վիճակը և բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունն ուղղակիորեն թելադրում են՝ հանրապետության պետական բյուջեի ծախսային որոշ հոգվածների գծով կատարել կրճատումներ, այնպիսիների գծով, որոնք նախանշված են ընդհանուր բնութի պետական ծախսերի համար: Բյուջետային միջոցների շոյալ ծախսումների կրճատումներից ստացված տնտեսումները կկազմեն զգալի գումարներ և կօգտագործվեն որպես պետական ներդրումային վարկերի լրացուցիչ աղբյուր: Այսպես, օրինակ, 1998 թ. ՀՀ պետական բյուջեով կապիտալ նորոգումների համար նախատեսվում է հատկացնել շուրջ 6.6 մլրդ դրամ: Այդ միջոցների զգալի մասը կօգտագործվի գործադիր և օրենսդիր մարմինների վարչական շենքերի վերանորոգումների համար, ինչը, մեր կարծիքով, չափազանց շոյալություն է մեր հանրապետության ներկայիս պայմանների համար:

Այնուհետև, նպատակահամար է նաև, որ պետությունն ակտիվորեն օժանդակի երկարատև վարկի այնպիսի տեսակի ձևավորմանը, ինչպիսին է առևտրային բանկի «բաժնային» մասնակցությունը փոխառուի գործունեության մեջ՝ վերջինիս բաժնետոմսերը կամ բաժնեմասերը ձեռք բերելու միջոցով: Օրինակ, ժամկետանց վարկի գծով փոխառուի հետ հարաբերությունները կարգավորելու համար բանկը կարող է ոչ միայն վաճառել գրավ գրված գույքը, այլև այդ գույքի արժեքի չափով մասնակից դառնալ փոխառուի կանոնադիր ֆոնդում: Դրանով բանկը իր բաժնային մասով կդառնա փոխառուի կանոնադիր ֆոնդի գոյացմանը մասնակցող իրավական անձ:

Առևտրային բանկերի կողմից տնտեսավարող տարբեր սուբյեկտների բաժնետոմսերի կամ «փայերի» ձեռքբերումը նշանակում է բանկային կապիտալի միաձուլումը էկոնոմիկայի մյուս ոլորտների կապիտալների հետ, որը, ամենից առաջ մեծացնում է ներդրումային գործունեության գծով տնտեսավարող սուբյեկտների հնարավորությունները: Միևնույն ժամանակ, նման գործընթացը, այսինքն, տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ բանկային անմիջական հսկողության իրականացումը, պայմաններ է ստեղծում նրանց ֆինանսաարևանքային կանգնածության կատարելագործման համար:

Այնուհետև ուշադրության կենտրոնում պետք է սլահել նաև այն երևույթը, որ շատ գյուտարարներ և ռացիոնալիզատորներ գերադասում են բացել սեփական կառույցների հետ: Բանկերը պետք է ակտիվ մասնակցություն ունենան նման գործունեություն ծավալող ռիսկային ձեռնարկություններում: Զարգացած շուկայական հարաբերություններ ունեցող երկրներում ֆինանսավարկային հիմնարկությունների նման նախաձեռնությունը ոչ միայն խրախուսվում է, այլև որոշակի աստիճանով նույնիսկ ապահովագրվում է պետության կողմից:

Էկոնոմիկայի ոչ բանկային հատվածում առևտրային բանկերի բաժնային մասնակցության մյուս ուղղությունը ֆինանսաարդյունաբերական խմբերի (ՖԱԽ) ձևավորումն է: ՖԱԽ-ի ստեղծումը, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, նպաստում է հասարակության նյութական, աշխատանքային և դր-

րամական ռեսուրսների ռացիոնալ տեղաբաշխման գործընթացներին, արտադրության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների ներդրման արագացմանը և հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: ՖԱԽ-ում առևտրային բանկերի մասնակցության հետևանքով բարձրանում է վերջիններիս (առևտրային բանկերի) վստահությունը առաջինների (ՖԱԽ-ի) նկատմամբ: Դա նրանց հնարավորություն է տալիս առևտրային բանկերից ստանալու խոշոր չափերի վարկեր, այն էլ բավական երկար ժամկետով և համեմատաբար ցածր տոկոսով:

Բանկային վարկի կառավարման կատարելագործման գործընթացներում էական դեր սխեմ է խաղան նաև պետական մակարդակով ստեղծված այն հատուկ մարմինները, որոնք կոչված են աշակցելու և ընդլայնելու տնտեսավարող սուբյեկտների ներդրումային գործունեությունը: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում բազմաթիվ կոմիտեների հետ միասին գործում է փոքր ձեռնարկատերերի շահերի պաշտպանության հատուկ ֆեդերալ գործակալություն՝ Փոքր բիզնեսի ադմինիստրացիա (ՓԲԱ): Այդ գործակալությունը բացահայտում է փոքր ֆիրմաների առավել արդյունավետ գործելու ոլորտները, նրանց օգնում է խոշոր ֆիրմաների հետ հաստատելու սերտ հարաբերություններ, օգնություն է ցույց տալիս ձեռնարկություններին տարերային աղետի պատճառած կորուստների դիմաց: ՓԲԱ-ի դործունեության հիմնական ուղղություններից մեկը ուղղակի և ևրաշխավորված փոխառությունների պետական ծրագրերի իրացումն է: Ներկայումս առավել ուշադրություն է դարձվում երաշխավորված վարկերի վրա, երբ կառավարությունը ՓԲԱ-ի միջոցով երաշխավորում է առևտրային բանկերի կողմից փոքր ֆիրմաներին տրամադրված վարկերի վերադարձը³:

Մեր պայմաններում խիստ անհրաժեշտություն է առևտրային բանկերի ներդրումային շահագրգռվածության խելացի կարգավորումը և լայնամասշտաբ պետական աշակցությունը: Դրա համար նպատակահարմար է պետական մակարդակով ստեղծել Բանկային ներդրումային վարկավորման աշակցման հատուկ ֆոնդ: Այն կոչված պետք է լինի հանդես գալու իբրև բարձր մակարդակով բազմակողմանի վերլուծություն իրականացնող յուրահատուկ միջնորդ՝ առևտրային բանկերի և էկոնոմիկայի ոեալ հատվածի միջև: Այդ ֆոնդի հիմնադիրներ պետք է դառնան պետությունը (օրինակ ԿԲ-ը, Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը կամ գործադիր իշխանության այլ մարմինները կամ կոմիտեները) և առևտրային բանկերը, իսկ ստացված շահույթը ամբողջությամբ պետք է օգտագործվի ֆոնդի կանոնադիր գործունեության իրականացման համար: Ֆոնդի գործունեության հիմնական նպատակը կլինի ազգային և համաշխարհային էկոնոմիկաների տնտեսավարող սուբյեկտների ժամանակավորապես ազատ դրամական միջոցների մի մասը հանրապետության առևտրային բանկերում կենտրոնացնելը և վերջիններիս միջոցով դրանք տեղաբաշխելը ներդրումային վարկերի ձևով:

Ֆոնդը ընդունակ կլինի կատարել հետևյալ ծառայությունները.

ա) Հանդես գալ երաշխավոր՝ երկաւաժամկետ խոշոր դեպոզիտների գծով: Ներկայումս արտասահմանյան շատ տնտեսավարող սուբյեկտներ պատրաստ են մեր ազգային էկոնոմիկայում ներդնելու նշանակալի միջոցներ, սակայն նրանք զգուշանում են ռեզիդենտ անբավարար քաղաքական կայունությունից:

³ Наука и жизнь, 1990, №12, с. 44, 45.

Ֆոնդը կարող է երաշխավորել երկարաժամկետ դեպոզիտների տեսքով այդ միջոցների ներդրումը ֆոնդը հիմնադրող բանկերում. որը, ըստ էության, կարողացնի երկարաժամկետ փոխառու միջոցների հոսքը ազգային էկոնոմիկայի և Բացաճալուել. գնահատել և կոնկրետացնել էկոնոմիկայի հեռանկարային ճյուղերում և ներդրումների պահանջարկը: Ֆոնդի բարձր որակավորում ունեցող մասնագետների ուժերով համաշխարհային շուկայի և ազգային առավելությունների միտումների հետազոտման հիման վրա առաջին հերթին պետք է որոշվի ներդրումային վարկավորման համար նպատակահարմար արտահանող ձյուղերի ցանկը:

գ) Վերլուծել հայրենական տնտեսավարող սուբյեկտների ներդրումային բիզնես-պլանները: Որպես կանոն, ֆինանսական նման վերլուծության իրականացումը առանձին ներդրողի կողմից բավական դժվարություն է ներկայացնում: Բացի այդ, առանձին սուբյեկտի շահերը, վերջին հաշվով, պետք է համաձայնեցվեն ամբողջ հասարակության շահերի հետ:

դ) Հանդես գալ որպես երաշխավոր. որպեսզի առևտրային բանկերը և ևլա-րաժամկետ վարկեր տրամադրեն ներդրողներին, իհարկե, տնտեսավարող սուբյեկտների ներդրումային մտադրությունների մանրակրկիտ ուսումնասիրություններից հետո:

Նման ֆոնդի ստեղծումը ամենևին էլ չի թուլացնի հանրապետության բանկային համակարգի տնտեսական դերը: Ընդհակառակը, այդ նոր ֆինանսական միջնորդը պայմաններ կստեղծի նշանակալիորեն կատարելագործելու բանկերի և էկոնոմիկայի մնացած սուբյեկտների կապը՝ հանրապետությունում ներդրումային գործընթացները խթանելու համար:

Վերջապես, հանրապետությունում ներդրումային գործունեության ակտիվացման նպատակով պետությունը պարտավոր է արմատապես կատարելագործել իր տնտեսական ֆադաֆականսը: Այսպես՝ մաքսային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի, ամենից առաջ, տեղական շուկան պաշտպանելու էժան, ցածր որակի արտասահմանյան ապրանքներից, երկրորդ, բարձր տարիքների միջոցով սահմանափակի սպառողական ապրանքների հիմնական մասի ներհոսքը և ցածր տարիքներով խթանի հումքի և կիսաֆաբրիկատների ներմուծումը: Նպատակահարմար է, որպեսզի պետության հարկային մարմինները թուլացնեն հարկային «հաշվիչներին» ճնշումը ներդրումային գործունեության վրա: Այնուհետև, պետությունը պետք է խթանի մասնավոր ներդրումներն այն ձյուղերում, որոնք ապահովում են թեկուզ աննշան շահութաբերություն, բայց դրա փոխարեն ունեն հասարակական մեծ նշանակություն:

Այսպիսով, բանկային վարկի կառավարման առաջիկա փուլերի բնորոշ առանձնահատկությունները կլինեն համեմատաբար ցածր սովորադրույքը և հիմնականում ևրկարատև վարկերի տրամադրումը: Զարգացած շուկայական էկոնոմիկա ունեցող երկրներում նորմալ չի դիտվում այն փաստը, երբ երկարատև վարկի գծով տոկոսադրույքը ավելի ցածր է կարճաժամկետ վարկի տոկոսադրույքից: Հաշվի պետք է առնել նաև այն, որ ի տարբերություն արժեթղթերի զարգացած շուկա ունեցող երկրների, մեր պայմաններում առավել ունակ և շարժուն աղբյուրը հենց բանկային վարկն է, որն ևրդուեակ է ազգային էկոնոմիկան բավարար չափով ֆինանսավորելու խոշոր ներդրումներով: Եթե ուղում ենք էականորեն մեծացնել իրական ներդրումների ծավալը, որը հան-

րապետության կայունացման և տնտեսական ներուժի հետագա աճի միակ երաշխիքն է, ապա պետք է բազմակողմանիորեն նպաստենք բանկային վարկն ազգային արտադրության մեջ ներգրավելուն՝ իհարկե այս ազգաշահ գործում հիմնականում հզոր հենասյուն ունենալով պետությունը:

НАПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ ИНВЕСТИЦИОННОГО КРЕДИТОВАНИЯ

Г. Г. АГАДЖАНЫН

Резюме

В целях всемерного снижения процентных ставок и расширения долгосрочного кредитования коммерческих банков следует предоставлять налоговые льготы по доходам от долгосрочных кредитов банков, ввести государственное страхование долгосрочных депозитов, ускорить процессы интеграции отечественных банков с зарубежными кредитными структурами, покрывать за счет государства часть процентов по кредитам банков, снабжать банки долгосрочными ресурсами в основном за счет средств от приватизации госсобственности, международных кредитов и совершенствования бюджетной политики.

Кроме того, государство должно активно поддерживать «долевое» участие банка в деятельности заемщика через приобретение акций или паев последнего. Также целесообразно создание специального Фонда поддержки банковского инвестиционного кредитования, способного предоставлять гарантии па крупные долгосрочные депозиты, оценивать инвестиционный спрос перспективных отраслей, инвестиционные намерения субъектов и выступить гарантом при предоставлении банками инвестиционных кредитов.